ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» «փետրվար» 2025թ N ՄՈ-257-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12րդ հոդվածի 5-րդ մասով, մարզի գյուղատնտեսության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Այվազյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքների ղեկավարներին և ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա..Այվազյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Բարսեղ Նիկողոսյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-02-18 17:54:47 GMT+4
Հավաստված է էԿԵՆԴ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 18 -ի
ՆՄՈ/257 -Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Անդամներ՝ Ա.Բեգլարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Կամո Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Զինավարդ Սարդարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

☒ Недействительная подпись

VERIFIED OCSP 18.02.2025 18:02:33 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ *Ա. Հովհաննիսյան*